[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
25	Հունվար	2019 թ.		U	8180862968
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
22	Հունվար	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 9 4 0 7 9 8 8
[9] Անվանումը	ՆՑԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐՋ. ԴԻՍՊ. Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 9 4 0 7 9 8 8 / 1
[11] Բանկային տվյալները	ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մ/ճ N 16022457801500
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ Բաղաբերդի 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ռում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակությունը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	թիվ 90503618 քր. գործով դատահոգեբուժական փորձաքննություն	դեպ ք	1	32833		32833	20	6566.6	39399.6
Ընդամենը						32833	X	6566.6	39399.6

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 6711590040
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոն, կազմակերպություն (անուն, ազգանուն)

պաշտոն, ստորագրություն (անուն, ազգանուն)

25/01/2019 11:02:43

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՏԻՑ N. _____
«01» _____ 20 թ.

Որոշում

դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն նշանակելու մասին

19.10.2018թ. ք. Երևան

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Վ.Սարգսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 90503618 քրեական գործի նյութերն ըստ մեղադրանքի Ալբերտ Սուրենի Պետրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի առաջին մասով,

պ ա ր զ ե ց ի՝

2018թ. օգոստոսի 7-ին առանց բժշկական սահմանափակման ՀՀ ԶՈՒ զորակոչված՝ ՀՀ ՊՆ 50869 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 4-րդ վաշտի 3-րդ դասակի 1-ին ջոկի գնդացրորդ, շարքային Ալբերտ Սուրենի Պետրոսյանը նույն թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, հիշյալ վաշտի զուգարանում մեկանգամյա օգտագործման ածելու կտրված սայրով իր աջ ձեռքին կատարել է անդամախեղում՝ պատճառելով աջ նախաբազկի շրջանի մակերեսային կտրած վերքերի ձևով՝ առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, որը հանգեցրել է նրա կողմից զինվորական ծառայության կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Ա.Ս.Պետրոսյանն իր արարքը պատճառաբանել է մեջքի շրջանում պարբերաբար կրկնվող ցավերով, սակայն դեպքից հետո Զանգեզուրի կայազորային հոսպիտալում կատարված հետազոտությունների արդյունքում նրա մոտ ախտաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել:

Դատաբժիշկ-փորձագետի թիվ 253/ա եզրակացության համաձայն՝ Ալբերտ Պետրոսյանի ստացած մարմնական վնասվածքները՝ ըստ օբյեկտիվ զննության և բժշկական փաստաթղթերի տվյալների՝ աջ նախաբազկի շրջանի մակերեսային կտրած վերքերի ձևով, հասցվել են սուր եզր ունեցող կտրող առարկայով /ներով/, հնարավոր է որոշման մեջ նշված ժամանակահատվածում և հանգամանքներին, որոնք ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին վերցրած առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Դեպքի առթիվ 2018թ-ի հոկտեմբերի 5-ին Գորիսի կայազորի զինվորական դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի առաջին մասով հարուցվել է թիվ 90503618 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին:

2018թ. հոկտեմբերի 19-ին Ալբերտ Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի առաջին մասով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Նկատի ունենալով, որ քրեական գործի ընթացքը որոշելու նպատակով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի մասնագիտական հատուկ գիտելիքներ, ուստի

ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-246 և 248 հոդվածներով,

որոշեցի՝

1. Քրեական գործով նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության փորձագետներին:

2. Փորձագետներին ներկայացել Ալբերտ Սուրենի Պետրոսյանին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տրամադրել քրեական գործի նյութերը:

3. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա) Մեղադրյալ Ալբերտ Պետրոսյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապո՞ւմ է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հոգեկան հիվանդությամբ և երբվանի՞ց:

բ) Եթե Ալբերտ Պետրոսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը գտնվո՞ւմ է արդյոք պատճառական կապի մեջ նրա կողմից 2018թ-ի սեպտեմբերի 23-ին անդամախեղում կատարելու հետ:

գ) Եթե Ալբերտ Պետրոսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ /քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակով/, ապա տվյալ հիվանդությունը կամ հիվանդագին վիճակը կամ խանգարումը 2018թ-ի սեպտեմբերի 23-ին՝ անդամախեղում կատարելու պահին, նրան զրկե՞լ է իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ դրանք ղեկավարելու ընդունակությունից /հնարավորությունից/:

դ) Ալբերտ Պետրոսյանը մեղսունա՞կ է, սահմանափա՞կ մեղսունակ, թե՞ անմեղսունակ:

ե) Եթե Ալբերտ Պետրոսյանն անմեղսունակ է, ապա նա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի՞, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞:

զ) Ալբերտ Պետրոսյանն իր առողջական վիճակով հասարակության համար վտանգավորություն ներկայացնո՞ւմ է, թե՝ ոչ:

է) Եթե Ալբերտ Պետրոսյանի մոտ առկա է հոգեկան հիվանդություն, ապա այն ձեռքբերովի՞ է, թե ժառանգական:

ը) Ալբերտ Պետրոսյանն ունա՞կ է ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները, թե ոչ:

4. Փորձագետներին խնդրել պատասխանելու նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբուժական փորձագետների իրավասության մեջ և էական նշանակություն կարող են ունենալ քրեական գործի նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության համար:

5. Փորձագետներին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային
քննչական բաժնի ՀԿԳ քննիչ՝ Ա.Վ.Սարգսյան